ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/88 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ
(Վարչական սարքավորումներ, համակարգչային տեխնիկա)

ք. Երևան

17 հոկտեմբերի 2019թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Գոհար Մեսրոպյան՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.
Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ
Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Գևորգ Ղահրամանյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի հաշվառման մասնագետ
Բացակայում է՝ հանձնաժողովի անդամ
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Պատրոն ՌՄ» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը մասնակիցների կողմից ներկայացվել են սահմանված ժամկետում և համապատասխանում են հրավերի պահանջներին:

3. ***Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.***

3.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ հայտը 1-ին չափաբաժնով գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3.2 Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/88 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

անդամներ՝ _____ Գ. Մեսրոպյան

_____ Ա. Մկոյան

_____ Գ. Ղահրամանյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան